



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.yasu.am

№ 180 «__25__» __02__ 2019 թ.

Արձանագրություն N 180

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2019թ-ի փետրվարի 25-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 28 (քսանութ) անդամներից 22-ը:

Օրակարգ

1. 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի քննությունների արդյունքների ամփոփում /զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. Թեկնածուական ատենախոսության թեմաների և գիտական ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
3. Թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի խմբագրման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
4. Գիտական աշխատությունների հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
5. Հանրային կառավարման ամբիոնի վերանվանման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
6. Դոցենտի կոչման համար դիմումի քննարկում: /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
7. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. 2018-2019թթ. ուս. տարվա առաջին կիսամյակի քննությունների արդյունքներն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.
ա/ ԵՊՀ հանրային կառավարման ամբիոնի ասպիրանտ Նարինե Ասրյանի թեկնածուական ատենախոսության թեման «(Վերա)բաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության գնահատման կորեյացիոն առանձնահատկությունները հետխորհրդային երկրներում», ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Մարգարովին:

3. ԵՊՀ հայցորդ Կ. Ալթունյանի «Քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմները և քաղաքական կառավարման արդյունավետությունը ՀՀ-ում» վերնագրով ատենախոսության թեման վերախմբագրել «Քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմները և պետական կառավարման արդյունավետությունը ՀՀ-ում» ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Մարգարով:
4. Երաշխավորել հրատարակության՝
 ա/ Պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Կիրակոսյանի «Ամերիկյան դիվանագիտությունը և Հայոց ցեղասպանությունը (1915-1917թթ.)» աշխատությունը:
 բ/ Տ.գ.թ. Գագիկ Եգանյանի «Միգրացիոն գործընթացների կառավարման հիմունքներ» դասընթացի ծրագիրը:
 գ/ Ք.գ.դ., դոցենտ Խաչիկ Գալստյանի «Հակամարտությունների ստեղծարար փոխակերպում» ուսումնամեթոդական ձեռնարկը ծրագիրը:
5. Դիմել ԵՊՀ գիտական խորհրդին ԵՊՀ «Հանրային կառավարում» կառուցվածքային ստորաբաժանման փոխարեն «Հանրային քաղաքականություն և կառավարում» կառուցվածքային ստորաբաժանման հաստատման հարցում:
6. Ընտրել՝ ա/ հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում դոցենտի կոչման գրանցել համար *Ռ. Պետրոսյանի* անունը:
 բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի քվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 28 անդամներից քվեարկությանը մասնակցել են 22-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝
Պետրոսյան Ռուզաննա-22 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գ. Պետրոսյան

Գիտական խորհրդի քարտուղար, դոցենտ

Ա. Իսրայելյան